բից, այլ միայն Աստուծուց։ Եթէ մենք, թշնամիներից շրջապատուած, որ և է նշան ցոյց տանք, թէ յարում ենք և կամ թէ աչք ենք ուղղում այդ կարծեցեալ օգնիչներին, այն ժամանակ մեզ ուրիշ բան չի սպասիլ, բայց թէ նեղութիւն, խոշտանգանք, յափշտակութիւն և սուր. իսկ եթէ մեր գրածն անստոյգ համարես և հաճոյական բան ասողներին ականջ դնես, տեղեկացիր միւս վստահելի անձերից, թէ անցեալ տարիներն ինչեր կրեցին իրենց բռնակալից արցախեցիք, երբ այն հաճոյախօսների վրայ յոյս դրին, և ինչպէս մեռաւ խղճալի Յովհաննէս կաթողիկոսն և ինչպէս քանդուեցաւ Գանձասարի աթոռը, և ուր են այժմ մելիքներն և ինչ սղէտներ քաշեցին նրանք։ Այդ դառնութիւնների ժամանակ որքան տեղերից մեզ գովասանք գրեցին, թէ շատ լաւ էր, որ մենք համակրութեան նշան ցոյց չտուինք նրանց և մեր սուրբ դահը վնասներից ազատ պահեցինք։ Այս բոլորն ստուգութեամբ իմանալուց յետոյ՝ զատիր սուտն իրաւից և մեղադիր մի լինիր մեզ»։

Սակայն թէպէտ Պոտեմկին իշխանի փորձը՝ դրդելու կաթողիկոսին Հայաստանի ազատութեան նախաձեռն լինել՝ յաջողութիւն չունեցաւ, բայց և այնպէս Կայսրուհին իւր նախագծին հետևելուց յետ չկասեց։ Ռուսաց զօրքերը Վ. Ա. Զուբով կոմսի հրամանատարութեամբ դէպի Պարսկաստան խաղացին։

Արշաւանքի մեծաւոր նպատակն էր, հրովարտակի ասելով, «վերահաստատել Իրակլ թագաւորին իւր կալուածների մէջ, Ռուսիայից կախուած դիրք տալ Ղարաբաղի հայ մելիքներին և նրանց հպատակ բնակիչներին. և յօգուտ մեր գրաւել Արարատեան հայրապետին, որ այնքան զօրեղ ազդեցութիւն ունի ամբողջ ցիրուցան հայ ազգի վրայ։ Այս բոլորը շատ միջոցներ կըտար մեզ քրիստոնեաների գլխաւորութիւնը հաստատելու և մեր գերագոյն իշխանութիւնն ապահովելու համար»։

Պ. Ա. Զուբով կոմսը խնդիր ուղղեց Յովսէփ սրբազան կոպոսին՝ «ցոյց տալ մեզ Ձեր փոյթեռանդն ծառայութեան նը-չանը՝ Մոզդոկ գնալ և բանակցել եղբօր հետ Պարսկաստանի և դրան սահմանակից ազգերի գործերի մասին, որոնց վերաբերմամբ դուք այնքան ընդարձակ ու մանրամասն տեղեկութիւններ ունիք»։ Յովսէփ սրբազանը փութաց ուղարկել Պ. Զուբով կոմսին իւր յօրինած տեղեկագիրը Հայաստանի և սահմանամերձ նահանգների մասին՝ դրանց աշխարհագրական քարտիզով հանդերձ. և Վ. Ա. Զուբով կոմսի հետ տեսնուելուց յե-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան